խատ լինիմք զմիւ և զգեշեր կատարելագործել զմեզ  
յամ ուսմունս , զի թերես յետ ժամանակաց ինչ մեք

ևս կարողասցուք գործակից լինել իւեթ լուսաւորուն  
ազգիս 'ի բաղաքի ուրեք : Արդ՝ որպիսի թշրւառուն  
ոչ հասանէ մեզ, եթէ գերապատիւ վրդպատ վշտա ~  
ցեալ 'ի յապերախտ թշնամունդ՝ կամ թողուցու բը  
նաւ զդասատունն, կամ ոչ տպագրեսցէ զանգին  
աշխատանս իւր 'ի վերոյիշեալ բարձր գիտունար, ոչ  
այս վնաս ծանրագոյն է մեզ ք թէ կորուսանէաք բգ  
կեանս մեր . զի ով այլ ոք կայ այժմ 'ի մէջ ազգիս  
հայոց, որոյ ուսումն և գիտունն հաւասար իցէ ամնը  
ման վրնպատիս մերոյ, ովլիցի մեզ դասատու և մա ~  
տենադիր հարկաւոր գրոց գիտունց . . . Գիտեմ զի  
քո վսեմագոյն խնասունդ պատրաստ է 'ի գրել, ոպ  
և խոստանաս խոկ գրել, սակայն ցաւելի է մեզ յոյժ

94 : « Աախ՝ այս, զի ահա այս առաջին գրեալդ  
խայտաւակեալ վատահամբաւեաց զքեզ 'ի պատճառս  
բազմաթիւ սխալանաց և ստունցքոց . և ստոյգ գի ~  
տեմք զի և միւս գրելիքդ սոցանման լինելոց են ; և  
հչլաւագոյն ինչ ք դարսուն՛ : Ակրդ՝ ցաւելի է այս,  
զի դու կամիս ուսւերէն գրել, և ոչ հայերէն . որոյ  
պատճառն այս է, զի բոլորովին տղետ էս 'ի հայե ~  
րէն շարագրուն . և ոչ կարես գննէ երես մի թղթոյ  
անսխալ գրել հայոց լեզուաւ . ոպ վկայեն ձեռաւ ~  
գիրք քո առ մեզ եղեալք : Արեդ՝ ցաւելի է մեզ այս  
(մի' հաւատար . ոչ ցաւեմք), զի դու ոչ վն մեը , այլ  
վն ուսւաց սիրողաց զարեւելն լեզուն՝ կամիս գրել,  
որպէս թէ ուսւթ կամ միւս եւրոպացէք կարօտ ի ~  
ցեն լսել զաղճատաբանուն այդպիսի արեւելցի կամ  
թիֆլիզեցի ստախօսի , զրպարտողի , մատնողի , և մո  
լորուն քարողողի : Ինաց ես խնայելով 'ի զուր ջան ~  
քըդ և յանօդուաց վաստակիդ վն ուսւաց , ասեմ քեզ  
թէ դու այժմ թողեալ զնս, վն մեր հայերէն գրեալ,

զի մեք կարօտ եմք լսել և խմանալ տակաւին բղմ ինչ  
վ՛ս արեելեան լեզուի հայոց : Ուշ հարցանես, զի՞նչ  
դրեցից, ահա բաւականանց գրեալ եմ՝ ի թէլեկըա  
ֆըն : Պատասխանեմ, սուտ ասես, ահա գրեալքդ  
այրեցեալ՝ ի բովս հշմարիտ կրիտիսի՝ ի մոխիր դար  
ձան . զորե դու ոչ կարես ուրանալ, վայ պարտաւոր  
ես այժմ, և ես հարկադրեմ քեզ, զի դու նոր գրես  
ցես, ոչ լառուսերէն, այլ հայերէն, և հաստատես ա  
ցես փաստիք զայն ամբ նիւթս, զորս տգիտուբդ սը  
խալ կարծեցեր՝ ի նոր քերականուես . որոց գլխաւ  
որքն՝ ես երեքին այնոքիկ, զոր եղի ի վերոյ (87) .  
որք թէ արդարե սխալ են, դու զնդդէմն նոցա փաս  
տիք ցոյց մեզ՝ ըստ այսմ կարգի .

95 : «Նախ» հաստատեալ թէ՝ ի լեզուիս մեր կան  
Պարզ ածականք ցուցանօղք զգերադրական աստիճան  
նըն . միայն թէ զՊարզ անուանս յառաջ բեր, և ոչ  
զՊարդս . մի՝ զի նոր հեղինակն մեր զգերադրականն  
արտաքսեալ է՝ ի Պարզ ածականաց (տե՛ս 'ի նոր քեւ  
ըակ . յէը . 45 . և աստ 'ի վերոյ հՏ՛ը . 72 . 73) և ոչ  
թէ՝ ի բարդ բառից . և միւս ևս զի դու ասես յէը .  
417 . թէլէւք . թէ Դո սիխ որք Արման, տակ և ու Ռусկի, իմելի վեց գրամմանիկ որ շեշտեն մինչեւ յայցին  
հոյդ այնող, ուն ևս ուստանի, ունենին՝ ի գլուխութեան զիւ ս  
ըն ստորէմտն, իսկ արդ ուռւաց գերադրականն է մի  
պարզ բառ՝ աննշան մասնկաւ՝ ի ծայրին երկիցս փոփո  
խեալ . դր . որ առանեանի, բլիշանանի եւ, և եթէ  
հայք ունին՝ ի քերականուե զերիս աստիճանս՝ այնպն,  
ոնդ ուռւաց ունին ըստ քո բանիցդ, ապա ուրեմն ցոյց մեզ  
թէ զիարդ կազմի գերադրականն մեր միով պարզ բա  
ռիւ երկիցս՝ ի ծայրին փոխեցնել : Խնձ երնի թէ ըւ

նիս այլ հնարք . բայց եթէ նման խուժադուժ մխի ~  
թար սեբաստացւոյն պարտիս 'ի վերջ բաղդատակա~  
նին յաւելուլ զմասնիկս Եղ . Դր . ստագունեղ , տգի  
տագունեղ , Առ . և թէպէտ դու արուեստիւդ քանդա  
կագործուն կարես ձևացուցան ել զայսպիսի անուա ~  
նըս . սակայն ծաղր առնէ հեղնելով զքեղ գաբրիէլ  
վ . յասելն յէթ . 199 , || Ենաեղեակ նորերը գերա  
դրականին ալ անշորհք կերպ մը խոթեցին , բաղ  
դատականին վրա Եղ մասնիկ բսելով , բայց անանկ  
Եղ մընէ , որ աւելի ժանկուուեց անունելը || .

96 : Արէւրութ՝ հաստատեա , թէ բառք գերադրա ~  
կան կոչեցեալք 'ի չամչեանէ և 'ի գաբրիէլէ անէս ~  
բարի , անէսբարի , ոչ են բարդ , այլ պարզ մի բառ  
ածական :

97 : Արէւրութ՝ հաստատեա , թէ աներեսյթ ասացել  
բայքն՝ ոչ են բօւն գոյական անուն , և առ այս պար ~  
տիս բառ առ բառ տալ պատասխանի փաստից վսեմաւ  
միտ նոր հեղինակին 'ի քերականուն նը 'ի 853 . 854 .  
855 . համարմն եղելոց :

98 : Արէւրութ՝ հաստատեա զկարծիսդ թէ աներես ~  
յթն է բայ , և պահէ միշտ զզօրուն և զյատկուն բա  
յից դիմաւորաց (всегда удерживаеть силу и свойствва  
глаголовъ) . առ որ՝ պարտական ես՝ զսահման , զպաշ ~  
տօն և զպարագայս դիմաւոր բայիցն յարմարել բո ~  
լորովին աներեսութից :

99 : Հինգերութ՝ հաստատեա , թէ աներեսյթն կա  
ցուցանէ զարմատ , յորմէ ձևանան ամբ ժամանակք ,  
(Составляеть корень , опть котораго образуются всë  
времена) . և զայս ցոյց մեղ օրինակաւ , նու դի՛ք զանե ~  
րեսյթս սպանիւնէլ . և յայսմանէ ձևացն 'ի վը բո զամ  
ժամանակնն՝ յորս խօսիս սուտ , զամբիւսա ստախօսունէդ .

զամ գէնոն , զամ եղանակն և զամ տեսուկս և զիս  
ստութեանցդ :

100 : || Եյերորդ՝ հաստատեան , թէ բառս լյա շենու ,  
է անուն առքական , գործողական կմը վերացեալ , զի  
կարացես բաղդատել զայն ընդ աներեսութիս լուսու-  
ութել (ի վերոյ 77) :

101 : || Յօնիշընդ՝ հաստատեան , թէ աներեսոյթն իք  
ըւ բայ ցուցանէ զիր կմը զաւարկայ զսդ ՛ներգոր-  
ծուե , ոաւ գлагոլ պոկազուած պամտաւութիւն ըստ տա-  
գաւուածի մաս մասութիւն (ի վերոյ . 78) :

102 : || Ա-Մերորդ՝ հաստատեան , թէ հայկական բառս  
յատիշուացիւն ուուս լեզուի թարգմանի սուրանուածուածու:

103 : || Հ-Անիշընդ՝ հաստատեան , թէ սեռականն յար  
եալ յաներեսոյթն ոչէ բուն յափիացուացիւն , և զայս պար  
տիս առնել նախ՝ Ճշմարիտ պատճառութ հերթելով ըզ  
փաստու նոր հեղինակին եւդեալս ը 863 . 864 . 865 .  
866 . համարուվք . և երկրորդ հաստատ փաստիւք ցու  
ցանելով զբո կարծիքդ , ը

104 : || Տառիներորդ՝ հաստատեան , թէ սեռականն անե-  
րեսութիւն է իսկապ պէտ բայի . և առ այս հարկ է քեզ  
նախ մի ըս միոջէ ցրել զփաստու մեծարու վրդպատիս ե-  
դեալս 'ի քերականուեն նը ընդ 856 . 857 . 860 . 861 .  
համարուվք . եւ եկեղ պարտիս սահմանել զայն բային ,  
(թէ ոչ ըսւնիս զսահման վրդպատիս մերոյ 'ի 860 . 865  
համարուն) և զայս սահման քո՞յ յարմարել սեռակա-  
նի աներեսութիւն , ապացուցանելով (թէ աներեսոյթն  
առնու զսեռական տէր (ի վերոյ . 83 . 84 . 85) :

105 : || Ա-Փառաներորդ՝ հաստատեան մեղ , թէ անե-  
րեսոյթք առնուն ևս զուղղական տէր բայի , ցոյց մեղ  
զգիրսն նախնի հեղինակաց , զգլուխն և զհամարն դը-  
րոց . և զվկայուն կամ զօրինակ բանից նոցա , միայն

թէ ուղիղ դատողութէ և համաձայն քերթողական կանոնաց, և ոչ թէ ՚ի թիւր միտս մեկնելով, կմբ բռնի յօտար իմաստ ձգելով զգբուածս նախնեաց . ոպէ երեսի անզգուշութէ արարեալ և գաբրիելվ . որ զայս բան || Այնու յաջաց անտի անօրինին Էռանդին որ սդանց բղիսեալ սորսորել (բ. Տաէ. թ. 9) կամելով ՚ի վկայ ածել կանոնի իւրում՝ ասէ || ուր բառն Էռանդին տէր է աներեւութին սորտորել || յէթ . 465 : Այկայն սխալի այրն իմաստուն, զի ոչ թէ բառն Էռանդին, այլ միւս բառն որդանց է ըստ նոցա տէր, իսկ ըստ մեզ յատ կացուցիչ՝ աներեւութիս սորտորել . իսկ բառս Էռանդին գոյական ձայնիւ եղեալ է ածական որդանց, փոխա նակ բառիցս Էռանդադին, Էռանդինով, իբր ասել՝ եռանդագին կմբ կենդանի որդանց սորտորել . որում վկայէ և բնագիրն եբրայեցւոց, որ այսպէս ունի զբանս || այնու զի ՚ի մարմնոյ անօրինին այնորիկ բղիսել ևս չէնդանի որդանց || : Ուր և զայս ՚ի միտ առ հարեւան ցի, թէ զիանութքաջուսումն անձինք ևս նման գաբրիւ էլ վրդպտի, պաշարել գոլով՚ի թիւր նախադատութց կարեն մոլորել և մոլորեցուցանել . սխալական բանից իւրեանց պատճառս կցիցել և ծամածուռ վկայութէ հաստատել, Առ : « Լաւ բաց յայսցանէ »

106 : Արէնդանդաներութ՝ հաստատեամ, թէ զայս նախադատուն նոր հեղինակին կատարեանունի՝ յայս, որով իրաւամբք թարգմանեցեր ՚ի ուուսերէնն, Դրույն написаны слогомъ нечислымъ, վ՞ զի слогъ ուուսաց առ մեզ է առ, և ոչ թէ ուամկական լեզու, ապա առ դարացու զբեզ և զգործդդ :

107 : Արէնդանդաներութ՝ հաստատեամ, թէ զայս պար քերուն, որով բայսումն այս, Բայց ՚ի գէլքը գոգչեալ խապէալ, սովոր էտ ոչինչ գոտինու ուսուցիչն և բառաւ

՚ և վարդմանեցեր ՚ի լեզու  
ուուսաց այնպ չարաչար ՚ի հակառակ միտս (՚ի վերոյ. 6)  
խոստովլն լեր կամ զտղիտունդ ՚ի քերականուն, կամ  
զչարունդ ՚ի թարդմանութեան :

108 : Օ այս ամ՝ գլխաւոր մոլորունդսդ՝ թէ կարող  
ես՝ արդարացն փաստիւք, հաստատեամ ապացուցութ,  
լեզուաւ հայոց և ոչ ուուսաց, միայն թէ ձշմարիտ կա  
նոնօք, առանց նենդաւոր խարէուն . քերականական  
սկզբամբք և ամ արդարութ և սիրով ձշմարտուն .  
զի միայն այսպէսն ըսունելի լինի մեզ . իսկ եթէ հակա  
ռակ այսմ միւսանդամ ձեռնամնէս լինիս ՚ի սուս խօ  
սել, զրպարտել, խաբել, կրծատել զբանս, եթ,  
գիտեամ անսերկբայ թէ պատրաստեալ կան առ մեզ  
գրեչք երկաթիք և պողպատիք առ ՚ի շարադրել հաւ  
յերէն և ուուսերէն ըդէմ միոյ թղթոյ քո՝ մատեանս  
մեծամեծս առաւելք զբարձրուն հասակիդ, և տես  
ցուք թէ ո՞վ լքանի կամ ձանձրանայ . զի ո՞պ ոչ ես  
եղե առաջին ՚ի խօսել, նոյնպ ոչ եղէց առաջին ՚ի  
լուն . և որովհետև ձշմարտուն, արդարուի, իմաս ։  
տուն և ուուսմն գիտունց առ մեզ են . իսկ ստուն,  
խաբէուն և տղիտուն՝ առ քեզ . վակ միշտ մեք լի ։  
ցուք պարզերես յաղթող . իսկ դու և նմանքդ՝ սեւ  
ըես յաղթեցեալ և ամօթապարտել . ոչ միայն ՚ի մէջ  
հայոց, այլ և առաջի ուուսաց և այլ եւրոպացւոց, և  
այս ցաւելի է մեզ յոյժ և յոյժ . վակ զի հաղիւ թէ  
սկսաւ այժմ սակաւ ինչ պայծառանալ անունն ազգիս  
հայոց ՚ի մէջ օտար ազգաց . հաղիւ թէ սկսան եւրո  
պացիք իմանալ թէ հայք ևս մարդ են, գտանին առ  
նս ոչ միայն ծառայագործ արուեստաւորք և քեռնա  
կեր վաճառականք, այլև քանի մի իմաստուն և ուսնել  
անձինք գիտացողը զգանազան լեզուս եւրոպացւոց և

ասիացւոց, ունին 'ի ռուսաստան գոնէ զի միայն Ճե  
մարան Աղիաղարեանց, և քանի մի տպարանս (թէ՛ն  
և անդործ դատարկացեալս) նա . հազիւ հաղ թէ,  
ասեմ, այսչափ ինչ յաջողեցաւ մեզ շնորհօքն նայ, և  
ահա կամիս դու խելացնոր բանիւքդ ցուցանել օտար  
ազգաց, թէ 'ի մէջ հայոց ոչ գտանի և ոչ իսկ քերա-  
կանուն գիտացող հեղինակ . և այս մի թէ ոչ է մատ  
նել զիւր ազգն և զուր վատահամըաւել առաջի եւրո  
պացւոց, և ո՞ր ներողուն արժանի լիցիս դու . ո՞րպի  
սի պատժով պատուհասելի ես դու . ո՞ր գժոխք ըն-  
կացի զբեղ վո՞յ յանդանունդ . որովհետեւ ոչ միայն  
զբերականուն, այլ և ոչ զտկարուն ուսմանդ և զիսո  
րուն ագիտունդ ոչ ձանաչես . վո՞յ զի այսչափ գիշե-  
րային խաւարաւ թանձրացնել է տգետ միտքդ, զի

### Սպառնեան, ԺԲ.

109: Ո՞չ կարացեր ուղիղ թարգմանել գոնէ զա-  
նուն և զժամանակ յովհանուն եղնկացւոյն, այլ բան  
դագուշեալ զաւանցանօք կոչես զնա Յօանի Եզնիկ  
живանի և ՎIII սովորութիւններուն բարեկանուննե-  
րութ բարու (յէթ. 112. բէլէն .) որ ցուցանէ զեղծիւր  
տգիտունդ, զի եղնին առ մեզ է յատուկ անուն մընդ,  
իսկ պէտին հարկ էր քեղ թարգմանել Եզնիկա-  
նի, կամ Երիանցի, զի եղնկա քաղաք հայոց կոչի  
ևս երեխ, զոր այժմ տաճիկք կոչեն արկանին կամ էօ  
զինկայ : Իսայց զգոյշ լեր, մի շփոթեսցես զայս և դա-  
ւառին արդին կամ արդառան, զոր պատմագիրք յունաց  
կոչեն արլունինի, որոյ և բնակիչքն հարկաւ կոչեն  
Արկանէանդ, տե՛ս 'ի հին հայաստան 67=69 : Այնպէս  
և զժամանակ նո՞ր սխալ յոյժ նշանակես, զի եղնկա-  
ցին մեր եկեաց ոչ յութենդ, այլ յերեքտասասաներդ  
դարու . յորմէ երկի թէ տգետ ես յոյժ ոչ միայն

'իքերականուն , այլ և զՊատմունի իսկ հայոց ամենեւ  
ին ո՞չ գիտես . վ՛ս զի թէպէտ և կամեցար ցուցանել  
զքեղ ուսւաց իբր Պատմիւ հայոց կմքերականունո  
ցա , սակայն յամ թուղթս տետրակիդ խարխափելով  
դանդաչս ՚ի բանս , ըստորում

### Սպառ-Ըն-Համար . Ժաման .

140 : Եւ ՚ի միւս էք . 143 . Աէլքի . յայտ առնես  
շոգիտունիդ ՚ի Պատմուն ազգիս հայոց , յասելդ վ՛ս  
աբբայի մխիթարեան վանաց վենետկոյ , թէ Կո-  
նիապիա Նատոյանը ոքի Արքան Ստեփան Կյո-  
ւերի-Ակոնց , այժմէան առաջնորդն է արդեն սույն գիւ-  
ռէր ագնոյ , բայց սխալիս չարաչար , զի ստեփանոսս  
այս վախճանեցաւ ՚ի 1824 ամի տն , ՚ի 29 աւուր յուն  
վարի . և փոխանակ նոր ՚ի նմն ամի ՚ի 4 յունիսի ընտ-  
րեցաւ աբբայ սուքիս ոմն վրոպատ լոկ , և ոչ եպս ,  
զի ստեփանոսս այն ոպա երեկ եղեւ առաջին և վերջին  
եպս նոր արդ եթէ զքո ժամանակի անօքն ո՞չ գիտելով  
ստունի պատմես , զանցեալ ժամանակաց պատմունին  
որպատ օրինակաւ պըտիս իմանալև այլոց Ճառել , եթէ  
ոչ նոյնոք ստուբ և սխալութ . և այսմ վկայ է միւս ևս

### Սպառ-Ըն-Համար . Ի .

144 : Մոլորունիդ , յոր կործանեալ ես ՚ի խաւարա  
յին գեշերի , յասելդ վ՛ս չամչեան միքայել վրոպտին  
(յէտ . 415) թէ Յն Գրամմատիկ ուրուկ , Պատմուն  
ուրուկ ուրուկ ուրուկ ուրուկ ուրուկ ուրուկ ուրուկ . յուրում ըն-  
ծայես չամչեանին զգիրք Ճարտասանուն . բայց արդ՝  
ցոյց մեզ ո՞ւր է Ճարտասանուն չամչեանին . յորում  
ամի և յորում բաղաքի տպեալ է այն գիրք . ՚ի վենեւ-  
ամի՞կ թէ ՚ի թիֆլիս . մի՞ է թէ բազմիցս տպեալ . և

կամ՝ զտպե՞անը ընթերցար թէ զձեռագիր ն՛՛ . զի՞  
արդ ո՞չ ցուցանես մեղ զտեղին . յոր երես թղթոցն  
կան անզգուշունք . կմ՞ զի՞նչ անզգոյշ բանս խօսե ~  
ցեալ իցէ չամչենն ՚ի ճարտասանուն , ցոյց աղաչեմք,  
զի՞ որովհետև դու միայն ես անաշառ գին հատանօղ  
տաղանդց և հեղինակաց քերականուն , ճարտասանուն  
և պատմուն , և ճանաչես զտեղիմն անզգոյշ սխալա ~  
նաց նոցա , վեյ հարկ է մեղ ՚ի քէն ուսանիլ , նու . . .  
Տե՛ս ուրեմն զխորուն չափազանց յիմարունդ , զի՞ տա  
կաւին հէ գիտես թէ մի միայն ճարտասանուն կայ տը  
պեալ յազգի մերում . և հեղինակ ն՛՛ոչ ոչ եթէ չամ  
չեանն է , այլ ստեփաննոս վրդպտն (տե՛ս 92) , զոր դու  
ծիծաղական տգիտունդ ընծայես չամչեանին . . . ով  
անձոռնի ճարտասանիս . . . զանզգոյշ սխալանս ճար  
տասանունն ճանաչե և վկայէ , բայց զհեղինակն դեռ  
ոչ ճանաչե . . . երանի՞ ազգին հայոց , որ զայսպի՞  
սի ճարտասանս ունի . . . երանի՞ աշակերտաց , որք  
ուսանին յայսպիսի դատաւորէ ճարտասանաց : Գրու  
ցէ ասիցես , թէ չամչեանն ունի յօրինեալ զՃարտա  
սանունի , բայց ձեռագիր է , դեռ չե տպեալ . . . սա ~  
կայն ասա մեղ՝ ուր տեսեր դու զձեռագիր ն՛՛ , և ան  
զգոյշ սխալանս գտեր յայնմ . երկի թէ առաքելէն  
նա առ քեզ զձեռագիր իւր զի՞ դատեսցես , դիտելով  
թէ դու ես դատաւոր կենդանեաց և մեռելոց . . .  
եղուկ այդպիսի խայտառակ դատաւորի , որոյ անիրա  
ւութեանն ծանրագոյն նշան է և այս , զի՞

### Սառաւեհան . Ի՞՞ .

112 : Խոսելով ևս ՚ի վը այլոց երեց գրոց , որք են,  
Կներականուն ուուսերէն և հայերէն . կտակ ո՞ն մե ~  
րոյ յնի քե՞ն . և Այբբենարան , զերկուս զառաջինսն  
պախարակես (յեթ . 121) , և զվերջինն՝ ոլ խաղալիկ է

քեղ նման տղայոց, դովես . սակայն զի՞նչ պատճառ  
 ունէիր չգովելց և զառաջինն ։ զի՞նչ սխալանս կա-  
 րես գտանել 'ի քերականուն աբրահամ սրկ՛ոգին (որ  
 այժմ՝ խաջապահ մեծապատիւ Վըդպտէ), և 'ի տետ-  
 րակն ազնիւ Աագինովին, զի դու որ ոչ իմանսա ոչ զլե-  
 զու հայոց և ոչ ուսաց, ոչ կարես ևս ուղիղ թարգ մանել,  
 թող թէ զայլոց թարգմանեալն ձանաչել.  
 Երանի՛ թէ դու ևս կարող լինէիր այն շափ շարադրել  
 հայոց լեզուաւ, որչափ թարգմանինք քերականուն աշ-  
 խատեալէ . զի դու և ոչ զտասնելող. մասն նը կարող  
 ես, ոպ տեսաք 'ի վերոյ զոդիտական թարգմանունոդ-  
 քո : Ինայց եղեալ ևս թէ կան յայնս երկու, երեք,  
 հինգ սխալանք . զի՞նչ վնաս անտի . միթէ վն այն շ-  
 ափ սակաւ սխալանաց գին և յարդ գրոցն պակասի՞  
 և նախատելի՞ լինի քեզ . ահա դու ինքնդ ութ երես  
 բան գրեցեր . և յայնս գտի ես զքսան սխալանս քո .  
 և իբրև քսան սխալ ևս զանց արարի նշանակել վն  
 ձանձրունս, ապա այսպիսի ամենասխալ և ամենասուտ  
 զբարարող գոլով դու, զի՞արդ համարձակիս քերան  
 բանալ և բամբասել զայլս անիրաւութ, մանաւանդ  
 զգերահանձար վըդպտու մեր և զաննման քերականուն  
 նը, յորում ոչ կարացեր գտանել և ոչ մի սխալբան,  
 ուր թէ լինէին ևս քանի մի անմտադիր թէթև վրիս  
 պակը, բոլորովին ներելի է նմա . զի՞նը 'ի մարդկանէ  
 կարող է շարադրել գերը ամենեին անսխալ . ո՞ր գըը  
 ուած հեղինակաց առ լատինս, գաղղիացիս, գերման-  
 ացիս և ռուսա աղատ է 'ի վրիպակաց . կամ առ մեղ  
 իսկ յնը գերս տպագրեալս (թող այժմ զմերոցս)  
 'ի միսիթարեան միաբանից վենետից ոչ գտանին  
 պէսպ սխալանք սակաւ կմ շատ ըս հմտուն յօրինողին,  
 յորոյ յապացուցունք զի մի' ոք կարծեսցէ զիս ստութ-  
 զբարարուն զանմեղս, նշանակեցից աստանօր 'ի բանի

մի նոր գրոց նց՝ զմի կմ զերկու օրինակս (ըսորմ փոք  
րուն տետրակիս ոչ ներէ յառաջ բերել այժմ զբա-  
ղումն կմ զամն), ող զի ուսումնասէր մանկունքն մեր  
մի խաբեսցին հւալով հեղինակուն այնչափ խմասնոցւ

113. Արդ նախ՝ Ռառարանն հայերէն և գաղղիա  
րէն տպեալ՚ի 1817 ամի ՚ի յարուն վրդպտէ, զբառ  
սըն տառընսպան, հնդէասպան, խուժասպան, եթ, հոլովէ  
ուղիղ ըս եկրդ պատկերի, խուժասպանէ, նաև . իսկ  
զբառմն հընտափան, սագասպան, հոլովէ ըս առաջին պատ  
կերի սագասպանէ, նէւ . որ է սխալ . զի ամ բառք  
մեր սպան մասնկաւ եզերելք, ող դադասպան, բուրու  
պան, եթ, միշտ հոլովին ըս եկրդ պատկերի, ող կաւ  
նոնափոխեալ է գերապատիւ հեղինակս ՚ի քերէն . յէթ  
38. 40 : « Այն բառարան զբառմն տառայն, բուրուն,  
հոլովէ ըս առաջին պատկերի . իսկ վս բառիցս խոչս  
յն, խորտայն, էտարայն, ասէ լինել անհոլովէլի. Պար  
ձեալ զբառմն ծերույթ, տարիոյթ, հողակոյթ, հոլովէ.  
իսկ զբառմն նարդույթ, բակմակոյթ, անհոլովէլի բարո  
զէ : Խաղում զայլ բազմատեսակ սխալաննն :

114. Երկրորդ՝ քերականուն գաղղիական տպել  
՚ի 1821 յարսէն վրդպտէ . յէթ . 562, հրամայէ զբառն  
արդարն շեշտել ՚ի վերջին վանկն՝ արդարն, և ոչ  
՚ի վերջընթերն՝ արդարն, զոր կամեցեալ պատճառօք  
հաստատել ասէ || զի է գործիական հոլով ող դիւ  
քեն, հեղակեն, կիւրեն, կիւրեն, բարին, բարին, բարին եթ || .  
Ռայց սխալի այրն գիտնական մարդկօրէն տկարութ,  
զի բառն արդարն ոչ է գործիական հոլով . այլ ուղ-  
ղական՝ մակրայցեալ ածանցակերտ մասնկամբս է-  
նման մակրայցիցս էբիւ, պիւն, սպարն, չն, ող գեղե-  
ցիկ ուսուցանէ նոր քերականուն յէթ . 154. և ող

զայսոսիկ բառս չե հնար կոչել գործիական (զի անհու  
լով են բառքն էք, միև, սորո), նոյնպես և ոչ զբառն  
տրամբ : Այս գեղեցիկ գիւտ սեփհական է վրդպիս  
մերոյ, որ ուսոյց մեղ այժմ՝ ի դասատուուն, թէ եր  
կոքին բաղհիւսական շաղկապքս ու, եւ, լինին ածան  
ցիչ մասնիկ մակբայից . յորոց թէպէտ բառն էւ կայ  
՚ի տպեալքերականուն, սակայն բառն ու մոռացուն  
՚ի բաց անկել է անդ, բայց կայ ՚ի ձեռագիրն ՚ի վերա  
ջին տողն այսպէս, ու = այժմու, վաղու, իբրու :  
Օերկուս մասնիկս զայսոսիկ ոչ ճանաչէ գաբրիել  
վ . յէջ . 117 : Իսկ որինչ այլ պատճառս յարէ անդ  
արսէն վ . վ՛շ շեշտի այսը բառի, ոչինչ զօրեն այժմ,  
զինոր ածաշունչն տպեալ՚ի վենետիկ ՚ի 1805 ամի ըս  
կիտադրելոյ և շեշտելոյ նախնի ընտիր ձեռագրաց,  
յայտնի ապացուցանէ մեղ զանկանոն և զանկարգ գըր  
չունա նախնեաց : ՚Այս հայրն արսէն ՚ի նմին տեղւոջ  
ասէ թէ բառս ոչինչ շեշտել յառաջին վանկն ո՛չինչ,  
իցէ մակբայ, իսկ շեշտեալ ՚ի վերջինն՝ ոչինչ  
իցէ անուն . և զայսմանէ ևս բզմինչ խօսեցաւ ՚ի դա  
սու վրդպտս մեր, փաստիւք հաստատել թէ այն բառ  
երբ և զիանը լինի գոյական, ածական և մակբայ,  
բայց ոչ կարացի զետեղել աստ զձառ նը վ՛շ ըսար  
ձակունն, գուցէ ինքն մուծցէ զայն ՚ի մեծ քերաւ  
կանութիւնն իւր :

115 : ՚Ա խնդրել իմ զծանօթունի ինչ առ գաբրի  
ելվ . վ՛շ բառիս ոչինչ, տեսի առ նմա (յէջ . 401) ըզ  
միւս ևս սխալ, զոր նշանակեմ աստ վ՛շ զգուշունքեր  
թողակից եղբարցս : ՚Ասէ նա թէ բառքս՝ ոչ ին, ո՛չ  
նէ ինչ, ո՛չ մէ ին, են հանրական բացասական անուն,  
և իբր մի բառ ըս յատուկ նշանակուն ածական լինին  
այլում գոյականի, իսկ միայնակ եղեալ իբր գոյական

ձեանան : Այսպիսակ է այս ուսումն . զի՞ ի սոսին  
բառն ո՞ւ մակրայ է դիմաւոր բայից ՚ի նախադասուն  
անդ եղելոց . իսկ մասնականքն չին , դին , դինչ , կամ  
ինդիր են բայից , կմ ածական այլում բառի . և այս  
ամ հաստատի յօրինակացնոր , որք այսպէս պարզին ||  
Հանգիստ միով իւիր՝ ո՞չ գտաւ մարմնոյ մերում . . .  
ո՞չ հանդիպիլ միոյ երիք ներողուն . . . միթէ կարօւ  
տացնյը իմիք , և նը ասեն , ո՞չ (հարստացած) իմիք || :

Պահանջել զայս լուծումն՝ նոյն ինքն իմաստն . զի՞ ամ  
նախնականունքուն են բացասական , ապա մակըայն ո՞ւ յարե  
լի է ՚ի դիմաւոր բայն , և ո՞չ թէ ՚ի մասնականսն :

116 : Երրորդ՝ ՚ի գիլքն կոչեցնել Ճ՛է Տորան Գալուն ւ  
լուս , որ է Թարգմաննել ՚ի մինաս վւյտունիւլունի ասացնել  
գրոց ինչ գաղղիացւոց , բզմ են անզգոյշ սխալանք :  
Յերես 7 . քերականունի , ճարտասանունի և բանաստեղ  
ծուն ուղիղ բասին ՚ի շարս աղատական արուեստից .  
բայց յեր . 8 . նոյն արուեստք բազմին յաթոռ գի՞ ս  
տունց և իմաստունց , հաւասարեալ փիլիսոփայուն և  
ածաբանուն , որ է սխալ անբժշկելի : Յերես 12 . գիր  
և տառ նոյնանան ըլ միմեանս . սակայն ամ քերականք  
մեր զանազանեն , զնո՞ս յերերաց , զորմէ տես առ գաբ  
րիել վւյտ . յեր . 168 : Յերես 13 , այբուբենք մոսկովաց  
ասին լինել քառասուն և երեք , բայց ամ քերականք  
և բառագիրք ուուսաց հաշուեն երեսուն և հինգ միայն :  
Վնդանօր մի յեօթն ձայնաւոր տառից հայոց՝ դնի տու ,  
բայց գիտեն և նորընծալք քերականութեան Ծէ այն  
է երկրաբառ կամ երկձայն , միացեալ յերկուց  
ձայնաւորաց այն , իւն , ո՞պ վկայէ և գաբըիել վւյտ . յեր  
172 : Յերես 26 . պարզունի և խրթնունի քերականա  
կան շարադրուն ընծայի միայն սովորական կմ անու  
վոր բառից , զոր իրաւամբք սուտ ցուցանէ գուբըիել

վրդպտ, յԵթ + 547 + 548 : Յօնողում վ՛ս համաւոտուն  
առ ժամն զայլ բազում սխալմունս այսորիկ և այլոց  
գրոց 'ի վենետիկ տպելոց :

417 : Խոհ արդ՝ եթէ այս նորատիպ մատեանք մը  
խիթարեանց ը քերականուն գաբրիէլին և չամչեա-  
նին չեն ամեննեին ազատ 'ի գիւստէ սխալանաց, զի՞նչ  
զարմանք է թէ և 'ի նոր քերականուն գտանիցին բա-  
նի մի վրիսպակք . եթէ հարիւրաւոր անձինք վանացն  
վենետիկ ոչ կարեն տպագրել գիրք մի անսխալ, զի՞-  
արդ կարողասցի միայնակ և անօգնական վրդպս մեր .  
և եթէ վ՛ս յայտնի սխալանաց գրոցն այլոց լուռ կա-  
ցեր դու կմ՞ նմանք քո, ընդէ՞ր ոչ ըւեցեր և այժմ  
վ՛ս նոր քերականունս . յորում գո՞նէ մին սխալ գտա-  
նել ոչ կարացեր . և ոչ միայն դու, այլ և ոչ քո նը-  
ման այլ չարախօս անձինք կարացին թիւր ինչ գտա-  
նել, թէպէտե բաց 'ի քէն

418 : Վայլ ո՞ն ևս զրախնդիր փառքուս բնակեալ  
'ի . . . քաղաքի կրկտելով զնոր քերականունս՝ ըստ  
տկար խելաց իւրոց նշմարեալ է 'ի նմա զյետադայ  
տարակուսանս . զորոց զպատասխանին թէ՛պ ևս յղե-  
ցինամակաւ առ նա, սակայն և աստ կամեցոյ հըա-  
պարակել, զի առաւել ևս ծանօթասցին ուսումնասի-  
բաց գեղեցիկ ձմարտունք նոր հեղինակիս :

419 : Վայլ՝ ասէր իմաստունն այն նախ՝ թէ նոր  
քերականունն յԵթ + 74 + ասէ վ՛ս էական բայից, թէ ը  
նշանակունն նոյն են ը չեղոքականաց. սակայն այս կար  
ծիք նը ոչ երեխ ուղիղ . զի էականք զգոյունի կմ՞ ըզ  
գոլն իրաց նշանակեն, իսկ չեղոքականք զգործելինչ  
իրաց, ոպ խօսի և գաբրիէլվ . յԵթ + 276 : Վայլ  
տու ես պատասխանի, թէ կարծիք գերապատիւ վար  
դապետիս ստոյգ է ամեննեին. վ՛ս զի բայս ԱՅ, Է՞ , Է ,

արմատ և նոյանշանակ է բայիցս Խանամ, Խանչանամ .  
և բայս Գրմ, գռո, գռջ, արմատ և նոյնիմաստ է բայիցս Պայտանամ, Պայտառըէմ. այլ արդ՝ բայքս Էանամ,  
Էանչանամ, Գոյանամ, Գոյառըէմ, ըստ քերթողաց են չէ  
զոք, ապա և բակըն էմ, գռմ, գէ՛թ ըստ նշանակունցն :  
Խակ Եղանիմ, Լոնիմ, յայտնի չէ զոք են ըստ սեռին, զի ոչ  
նշանակեն զդոյունի կամ զդու իրաց, այլ զեղանիլ և  
զլինել իրին այս ինչ կմ այսպիսի ինչ, ով եղանիմ Տորդ,  
Անիմ Գէփուն, և նոյնանան ըստ չէ զոքացս Տորդանամ, Գէփ  
անանամ : Ա կայ լիցի քեզ և գարբեկէլ վ . որ միօրինակ  
սահմանաւ սահմ նէ զէականն և զչէ զոքն, յասելն (յէր.  
53) ներգործունէլ կամ ինքիր մէջը միայն կնշանակէ,  
ու աս կըսվի Էանչան . . . կամ ներգործունէլ կիմացվին  
իրմէն ու իր մէջը միայն եղած, ու կըսվի չէկրտանիան  
Ուրանօր ըստ պատահման ծանիր զմիւս ևս սխալ գաբ  
ըիէլ վ . զոր մոռացայ նշանակել 'ի վլերոյ . զի յայսմ  
վայրի զսեռս բայից բաժանէ 'ի չորս, Էանչան, նէր  
Գործակին, Էրտառային, չըստունին, ուը ուղղադատութ  
զէական բայս մուծանէ ըստ սեռիւ . բայց ապա յէր . 278 ,  
զսեռն տարածէ միայն յառքականս, և արտաքսէ ալ  
զէականն դնէ զհասարակ բայս :

420 : Վըկրորդ՝ ասէր նա, թէ նոր հեղինակն  
վայրապար բամբասէ (յէր. 204) զկարծիս հնոց, յասել  
նոցա թէ սեռական բառն լինի Տէր անդէմ բայից ,  
զի Ճշմարիտ է կարծիք նախմնեաց , ևն : Քնոդէմ այսմ  
գրեցի առ նա , թէ լոկ խօսելն կմ գովելն զնախնիս  
չվճարէ ինչ յուսմիւնս : թէ ունիս փաստո հակառկ  
փաստից նոր հեղինակին 'ի համարմն 849=867 եղեւ  
լոց, գրեա զի քննեցուք զՃշմարտունին . զի և ինքն  
գերապատիւ զրութան խոստանայ (յէր. 425) ընդունիլ  
զներհական կարծիսն , միայն թէ Ճշմարտունի իցեն և  
ոչ շաղփաղփութիւն :

121. Արբորդ՝ գըեալ էր, թէ նոր հեղինակն ուս  
սուցանէ (յէր . 345 . և առաջ . նշ), թէ յոգնակի յատ  
կացուցողն միշտ բազմացուցանէ զյատկանալին ևսև  
զեղականն . այլ այս կանոն նոր ոչ Ճշմարտի միշտ . զի  
յասել իմ || Տայր որդւոցն զեբեթեայ յոր յակովքու և  
յովհանու, || յատկացեալս Տայր ոչ բազմանայ վասն  
յոգնակի յատկացուցչու որդւոց, Կոյսպ յասելս || Կա-  
տակ ծնողացն յովակինայ և աննայի || , յատկանալիս դո-  
տու ոչ լինի բազում վլու յոդնակի յատկացուցողին ծնո-  
ղաց . ապա թէ ոչ, ասելի էր, թէ որդիքն զեբեթ-  
եայ ունեին զէրէուս մարս, և ծնողքն յովակիմ և ան-  
նայ ունեին զէրէուս զաւակս : Եւ այս պատասխանի եւ-  
տու, թէ կանոնն վսեմամիտ հեղինակին անխախտե-  
լի Ճշմարտի է . և Ճշմարտի յօրինակադ իսկ . ուր նախ  
յուշ ածեալ թէ մյուլ է Ճշմարտունի իմաստից ևս վար  
դապաց կմբ ածաբանից, և այլ ևս քերթողական շա-  
րադրուն բառից, ասելոք թէ յառաջին օրինակիդ՝  
բազմանայ ոչ իրն կմբ կինն այն, այլ միայն բառն Տայր,  
զի հնար է քերթողաց կրկնել զայդ բառ այսպ || Տայր  
յակնեու է ևս Տայր յակնեուս || , յորում ոչ եթէ մայրն  
իրօք բազմանայ, այլ բառն նոր կրկնի : Կոյսպ զեկոդ  
օրինակն յօրինեն քերթողք այսպ || Կատակն յովակինայ է  
կատակ աննայ . . . կատակն յովակինայ էամ կատակն աննայ . . . և,  
ուրանօր զաւակն բազմանայ և կրկնի ոչ ևս իրն, այլ  
ևս բառին . և այս շատ է 'ի Ճշմարտել զկանոնն քերա  
կանուն, որ ուսուցանէ զկազմունի բառից, և ոչ իմաս-  
տից ևս իրն . Ծանոթ զի յայսոսիկ նախադասունիս || սա-  
ղովմէ էր Տայր յակոբու և Տայր յովհանու . . . մարի-  
ամ էր կատակ յովակինայ և կատակ աննայի || , եթէ ևս  
քեզ իսկ Ճշմարտի է թէ՛ իմաստն և թէ՛ կազմութիւնն  
քերթողական . ապա ուրեմն Ճշմարտի է և կանոնն զե-  
բապատիւ վարդապետիս մերոյ :

122 : Առըրորդ՝ առարկէր փասքումն զե՞րդ և  
 շեօթնե՞րդ առածմն նոր հեղինակին (յէջ. 385), յորս  
 ասէ նա , [թէ] որեւ իցէ բառ եղեալ 'ի նախադա  
 սուն միշտ պարտի լինել կապէ՛լ ը այլում բառի առն  
 չուր ինչ , զի ոչինչ բառ կազմէ զխօսակցուն առանց  
 կապելոյ ը այլում || . այլ այս կանոն նոր մերժելի  
 է . զի դնին երբեմն 'ի նախադասուն բառը ինչ թարա  
 մատարք , կմ առ 'ի զարդ , ևս և կոչական անուանք ,  
 և միջարկունք , զորոց և ինքն գրէ (յէջ. 378) [թէ միու  
 ջարկուիքս և՛ , այի՛ , և՛ , վարին միայնակ առանց ինչ  
 կապակցելոյ ը այլում բառի կմ առանց ինդրոյ , և՛ :  
 Պատասխանեմ , [թէ կանոնն վրդպտիս ոչ է մերժելի ,  
 այլ ծասքելի և յանկելի , զի ասել նոր թէ ոչինչ բառ  
 կազմէ զխօսակցուն (որ է նախադասուն) առանց կապել  
 լոյ ը այլում , ոչ ապաքէն անսուտ ձշմարիտ է վշն կո  
 չական անուանց և միջարկունց , որք ոչ կապելով ը  
 այլում ոչ բաղադրեն զխօսակցուն , այլ դնին 'ի խօսս  
 իբր միջանկեալ ինչ բառ առանձին միայնակ և ինքնա  
 գլուխ , և՛ն 'ի նախադասուն , այլ ոչ կազմեն զայն իբր  
 մասն : Խսկ այն բառք՝ որք ասին դնիլ թարմատար կմ  
 իբր զարդ , տակաւին ունին անդ զպաշտօն ինչ իբր  
 մակըայ , իբր աճական , խնդիր , շաղկապ , և՛ : [թ-ող  
 զի նոյն ինքն զարդարելն է պաշտօն ինչ : Յայսոսիկ  
 յաւել և զայն , զի նոյն ինքն հեղինակն (յէջ. 384) առ  
 սէ վշն առածիցն [թէ] || իմաստուն յետագայքն կատա  
 րելագործեացեն զայնս . . . զաւելորդս յապաւեալ ,  
 զիեղակարծս հաւաստեալ , || և՛ . վշն զի ամ առա  
 ջին զիւտ միշտ կարէ ունել զթերուն ինչ՝ զոր յետա  
 գայք ուղղեն և ողորկեն , բայց պարծանքն առաջին  
 գտողին է , որ մայր և ծնող և յոյնչէ ստեղծողէ . իսկ  
 ուղղագրողքն զայեակ և մշակ են , որք զայլոյ ծնունդն

զարդարեն . վե՞ս այսը պատճառի նոր հեղին ակո ան ~  
չափ չնորհակալուն և վարձատրուն է արժանի (թէ պէտ և յազգի մերօւմ փոխանակ վարձու նախատինս  
հատուցանեն իմաստնոց) . զի զոր մինչև ցայծմ ոչ ոք  
՚ի քերականաց եգիտ , նա իւրով սրամտութեն ՚ի լոյս  
ընծայեաց զաւածն զայնոսիկ :

123 : Հինգերդ՝ գրեալ եր իմաստակն . թէ նոր  
հեղինակս (յէբ . 332) ասէ վե՞ս բառիցս պհեա , զի՞նէ , յէա ,  
յայտնել զապաւնի ժամանակ , բայց իմ քննել զամ  
օրինակս նը , ոչ գտի զբառ կմ զժամանակ ապառնի :  
Պատասխանի , կայ անդ յայտնապ ժամանակ ապառնի ,  
բայց աչք քո չեն տեսեալ , զի շնորհն ոչնի ապառնի  
է նկատմամբ տբահութու . . . նոհն է ապառնի նկատմամբ  
ցաւադին էնեաց . . . ուրախութիւն ապառնի են  
նկատմամբ յաղթառնեան . ԱՌ :

124 : || Եցերդ՝ ծանծաղամիտ դատողութ կամէը  
հակառակիլ անստելի առածին վրդպտիս մերոյ (յէբ .  
213 . 387) , թէ ը մէջ գոյականի և ածականինը ոչ  
մտանէ շաղկապ . որում հակառակ գրեալ եր զայս  
օրինակ ինքնահնար || զարծաթն հարկ է տալ պարա  
կեշտակրօն կամ արանց կամ կանանց || : Պատասխա  
նի . օրինակդ ինքն զինքն խայտառակէ , նախ՝ զի չէ  
ոչ հայկական , այլ յայտնի լատինական , և անլուր առ  
նախնիս մեր , առ որս չէ հնար գտանել և ոչ ուրեք :  
Եկդ՝ զի յայդմ ևս շաղկապն կայ ոչ ըմէջ ածակա  
նի և գոյականինը , այլ ը մէջ երկուց խնդրոց բառ  
յիս պալ . զի ուղիղ շարքն է , || հարկ է տալ կմաղպար  
կեշտակրօն արանց , կամ պարկեշտակրօն կանանց || :  
բայց դու թէ ընդունիս՝ զատական շաղկապի մտանե  
ը մէջ գոյականի և ածականինը , աղէ ցոյց մեզզօրի  
նակս ՚ի նախնեաց . զի այդ է անլուր մոլորութիւն  
Ընդդէմ քերականութեան :

125. Այօթներորդ՝ ստղամանէր նա 'ի նոր քելրակառ  
նուե և զայս, զի հեղինակն զբացայայտին կոչէ մէնիւ  
(յէ՛ք. 338) որ է (ասէր) թիւր, վ՛ս զի մեկնիչ կոչի այն  
որ ըարձակ ճառէ զհամառօտ ինչ բան կմբ բառ. իսկ  
բացայայտին է մի կմբ երկու բառ, և՛՛ : Այատասխան  
նի ետունմա, թէ ուսումն նոր հեղինակին Ճշմարիտ  
է յոյժ և կարի գեղեցիկ նախ՝ վ՛ս այնը, զի ամ քերա  
կանք մեր ուսուցանեն (չամչ. յէ՛ք. 282. գաբը. յէ՛ք. 328)  
թէ 'ի մէջ բացայայտելի և բացայայտիչ բառին միշտ  
կայ զօրութ կմբ ներգործութ՝ մեկնական շաղկապ ինչ  
այսինքն, այսինքն է, այս է. արդ՝ եթէ այս շաղկապը  
մէնակն կոչին 'ի բոլոր հնոց, և դնին ը մէջ երկուց  
բառիցդ, ապա ուրեմն յայտ առնեն թէ մի յայնց բա-  
ռից է մէնիւլ, և միւսն է մէնիչ, ևսև հաւանուը նախ  
նեաց. ապա թէ ոչ, պարտ էր և զկոչումն շաղկապացդ  
փոխել և անուանել զայնս շաղկապ բայացակն ։ և  
եկող՝ վ՛ս այսը, զի առ մեզ բառքս մէն, յայտ, բայ,  
յայտնէ, ամենեկին զմի և նոյն իր նշանակեն, և ոչինչ  
իւիք տարբերին. վ՛այ օրէն լինէր նոր հեղինակին նա-  
խադասել զմէնին թէ վ՛ս պարզ համառօտուն, և թէ  
վ՛ս համաձայն լինելոյ կոչման և իմաստից նախնեացն,  
և յայսմանէ իմանաս թէ 'ի բմաց քոց և ստահնար է  
այն սահման և տարբերութ, զոր դու ետուր բառիցս  
մէնիչ և բայացակն զի ուստի՞ իցեն այդ զանաղանուիք,  
յոր նախնեաց աւանդելը, աղէ ցոյց զտեղին, զի հաւա-  
տասցուք. Ռայսափ ինչ առ լուծումն հակառակունց  
փասքուս իմաստակին, որ կարծեմ թէ երբեմն էր ա-  
շակերտ մեծապատիւ վարդապետիս մերոյ :

126. Իսկ քեղ ևս պարոն թիֆլիսեցի, բաւական  
իցի այսքանս վ՛ս զդաստուն և ուղղուն քո. եթէ կայ  
'ի քեղ երկիւղ այ, հաւատք և խղճմտանք, պարտիս

այժմ խոնարհութ անկանիլ յոտս Երախտապարտ վար  
 դապետիս և խնդրել 'ի նմանէ զներողութի սխալանացդ  
 և սուտ զրպարտութեցդ , որովք անիրաւութ բամբասե-  
 ցեր զառ աջին իմաստուն վրժապատճեն և զուսուցին մեր,  
 որոյ նմանն սակաւ յոյժ գտեալ է 'ի մէջ ազդիս 'ի սկզ  
 բանէ մինչեւ ցայսօր . որոյ պատճառուն յայտնի է , վ'ա զի  
 ուսմունք և գիտութիւն թէնպ ըս ինքեան նկատեալք՝ պատ  
 ռական և սիրելի բարիք են , զի լուսաւորեն զմիտու  
 և զհոգի մեր , զատանեն յանբանից և անծանման առա-  
 նեն զմարդս . սակայն որովհետեւ արգելուն ևս զմեզ  
 պարապել արշեստից կմ վաճառականուն 'ի ձարելըց  
 դրամս վ'ա ապրուստի կենացս , վ'ակ գիտուն անձինք  
 գրեթէ միշտ աղքատ և կարօտել լինին օդնուն այլըց-  
 և վ'ա զի իշխանք և մեծատունք մեր ոչ կամին օդնուն  
 դրամով իմաստոց , ոչ սիրեն պատուել և վարձատ-  
 րել զնն , այսու պատճառաւ և գիտուն անձինք յուսա  
 հատին և օրըօրէ պակասին 'ի մեզ . և ոչ այսչափ միւ-  
 այն , այլև նորահաս աշակերտք և սրամիտ պատանիք  
 մեր ևս տեսանելով զայս չար օրինակ , թէ իմաստունքն  
 ազդիս աղքատութ մուրանան առ դրունս հարստաց ,  
 իսկ իշխանքն մեր թէնպեւ տղետք՝ հարստութ ձոխա-  
 նան , կառօք և երիվարօք հպարտանան , փառօք և պատ-  
 ռուով բարձրանան , ևա . վ'ակ թողուն զուսմունս և զգի  
 տուիս , և հետեւին դրամս հաւաքել . և այսպիսի ձա-  
 նապարհաւ՝ տգետ և յիմար մարդիկ բազմանան , իսկ  
 ուսեալ անձինք սակաւանան յազդի մերում . ուր ը հա-  
 կառակն՝ եթէ եկեղեցական և աշխարհական իշ-  
 խանքն մեր պատուէին՝ վարձատրէին և բաւականութ  
 տային գիտուն մարդոց , այժմ բզմ յոյժ փիլիսոփայք  
 և հեղինակք գրոց ծաղկել էին 'ի միջի մեր , և ոչինչ  
 պակաս լինէաք ք զուսաւոր ազգս եւրոպացւոց . վ'ա  
 զի պատիւն և վարձատրուին թէգ ըս իշխանաց խթան

լինի և բորբոքէ զմիտս իմաստնոց՝ ՚ի լուսաւոյել ղազւ  
 գըն և զդիտուին, որում բզմօրինակս ունիմք ՚ի հինան  
 և ՚ի նորս : Հուովմ ոչ կարէր ունիլ զշիչերոն, զշէ ւ  
 զար, և զայլ անթիւ ձարտասանս, եթէ ձարտար աւ  
 տեսախօսըն ոչ բարձրանային յառաջին դահս տըուեն,  
 ՚ի հիւպատոսուին, ՚ի դիկտատորուին, նա : Ո իրածիլոս  
 և Հորացիոս ոչ կարէին այսչափ վերաթեւել ՚ի բար ւ  
 ձունս, եթէ ոսկի օդուտոս կայսեր և պաշտպանուին  
 Արեկենասայ ոչ տային նոց թեսս թուչելոց : Օ նոյն ասե  
 լի է և վա դեմոսթենեսի առաջին ձարտասանի յու  
 նաց : Ի այց և ՚ի մեր իսկ ժամանակս աղջն ոռւսաց  
 զիարդ կարէր յայնչափ սոպուուէ փոխիլ յայոչափ լու  
 սաւորուին, եթէ առատաձեռն պարգե և պատիւ մե ւ  
 ծին Պիտրոսի կայսեր և յաջորդաց նոր ոչ հրաւիրէր  
 զդիտունս յայլայլ աղջաց և քաղաքաց եւրոպաց ւ  
 ոց, կմ զեկեալ գիտնականս ոչ վարձատրէր լըու  
 լի ուոձկօք և ընծայիւք . Ուրեմն այսպ ՚ի մեզ իսկ լու  
 սաւորուին աղջիս կախի զառատաձեռնուէ իշխանաց  
 մերոց, զի թէ գտցին ՚ի մեզ մեկենասք, լինիցին ևս  
 վիրածիլոսք . վա զի իմաստունք առանց մեկենասի ոչ  
 կարեն ապրիլ, թող թէ պայծառանալ : Անթերցայ  
 ես քանիցս անգամ ՚ի գիրս ոռւսաց և գաղղիացւոց,  
 որք ՚ի խօսելն վա աղջիս հայոց գովեն զմեզ միայն  
 յայսմ, թէ հայք արի վաճառականք են յասիա և յեւ  
 րոպա, նա . բայց ոչ երբէք ընթերցայ առ նոր, թէ ՚ի  
 մեջ հայոց գտանին փիլիսոփայք, աստեղաբաշխք, երկ  
 րաչափք, հեղինակք անձաբանուէ, մաթեմատիկայի,  
 բանաստեղծուէ, նա . և այս ոչ ապաքէն անտանելի  
 ամօթէ մեզ, զի օտար աղջք այլ ինչ գովելլի նիւթ  
 ոչ գտանեն ՚ի մեզ, բայց միայն զվաճառականուին .  
 որ է արուեստ ինչ կմ լաւ ես, բեռնակրուի պատ  
 շաճեալ ծառայից և ռամփկ մշակաց, և ոչ թէ գործ

ազնուական անձանց (ո՞վ 'ի մէջ ռուսաց, լեհացւոց, և ազնուականք ո՛չ լինին վաճառւական) զի նպատակ ն՛ը է միայն շահելքանի մի դրամս և կերակրել զմարմինն, և ո՛չ թէ լուսաւորել զմիտս և զհոգի մարդոյն . և ու բովլիւտե այսօր իսկ տեսանեմք թէ յազդի մեր՝ հազարն վաճառւական է, և հաղիւ մի կմ երկու ուսեալը գտանին . յայսմանէ իմանամք, թէ առ մեզ բազումք յոյժ մարմնասէր և արծաթասէր են, և դեռ չեն առ եալ զաշակ գիտուեց, ուսմանց և լուսաւորուե . և ահա առ այս վախճան պարտիմք նմքն ջան դնել, զի օրը որի սէր ուսմանց տարածեսցի յազդիս . և այս յայն ժամ լինի, յորժամ գիտունըն մեր սիրեն և պատուեն զմիմեանս . միաձայն լինին և գովեն զգրուածս իրեւրաց, և յորդորեն զգողովուրդն յուսումն իմաստուե, որով և ուսեալըն բազմանան, և կատարելադործեն զբիտուիս և զմատեանս . զոր տացէ մեզ ամենողորմ ստեղծօղն աղօթիւք սբ լուսաւորչին մերոյ տեսանելամ ուրեք, մանաւանդ՝ ի սբ թէոռն լաշմիածին:

427 : ՚ ՚ ՚ վախճանի բանիցս աղաչեմ զբարեսէր ընթերցողսդ, եթէ տեսանեք 'ի տետրակի աստ թէ ուրեք գուցէ սաստիկ և խիստ ինչ խօսեցեալ եմ ընդ դէմ անանուն զրպարտողիս, աղաչեմ մի' ինչ վշտաս-ջիք . զի այսչափս դեռ սակաւ համարի նմա, եթէ քննեսջիք զպարագայս անիրաւուե ն՛ը . որոյ ծանրութիւնն կայանայ նախ՝ յայնմ զի զուր և առանց պատճառի գրեաց, ըս որում ո՛չ կարաց գտանել և ո՛չ մին սխալ . եկըդ՝ յայնմ զի ռուսերէն գրեաց . ուր թէ հայերէն գրէր, ո՛չ այնչափ ծանր թուեր մեզ, մանաւանդ զի պատեաց մեզ տպօղն թէլէկրաֆին, թէ այս տետրակք ն՛ը տարածին և յեւրոպիս, 'ի փարեզ, 'ի լընտոն, 'ի վեննա, և յայլ բաղաքս . ուր ընթեւ-

Նլով զանիրաւ զրպարտուեն նը , գիտունք տեղւոյն՝ ի  
հարկէ կարծեն , թէ վրդպտք էջմածնի այնչափ տը  
գետ են , մինչև ոչ կարեն գոնէ զբերականուել լեզ-  
ուի իւրեանց շարադրել . որով վատահամբաւի ոչ  
միայն մեծապատիւ վրդպտք , այլ և բոլոր սբ Շմբռն  
և ազդն մեր . վնկ հրամանաւ Ա Եհազնեայ Տեարցն  
շարադրեցաք մեք զպատախանի նը ևսև ոռւսերէն  
լեզուաւ և տպելոց եմք ՚ի նոյն թէլէկըաֆն № . 10 .  
զի շինեսցին միտք եւրոպացւոց : Ուսողում յիշել և  
զայն , զի այս այս եղեւ չար օրինակ այլոց . վն զի մին  
չեւ ցայսօր ոչ եր երեեալ յազգի մերում այսպիսի  
ինչ . ՚ի ոռւսաստան տպեցան յառաջ քայս քանի մի  
գրեանք հայոց լի անթիւ սխալանօք , և ոչ ոք գրեաց  
ինչ հակառակ նց . միայն լիրքս այս եղեւ առաջին , որ  
յանդգնեցաւ բերան բանալ լըդէմ աննման նոր քե-  
րականուեն . յորում չէ հնար դտանել զայլ ինչ սր-  
խալ , բայց եթէ զայնս , որք վրիպակաւ տպագրուե  
այլազգ եղել են . որոց ոմանք տպել կան ՚ի վախճանի  
անդ քերականուեն , և զոմանս յետոյ տեսաք . զորոց  
զբովանդակն ահա աստանօր ՚ի պէտս ուսումնականաց  
նշանակեմ ես

Ուսումնական Դ շնչեցէ , որդէգե  
ալդպալյա Շնչերանին , և եւսիսպագէս զնուան-  
անա աշուշեք ամենապարի Անշայել Ծայ .  
ըսդոյն Ա որդտուետի Սուլուննեան :

Sumite materiam vestris , qui scribitis , æquam  
Viribus , et versate diu , quid ferre recusent ,  
Quid valeant hinc ne vos censura reprendat.



Արիպակը տպագրուեն նոր քերականութեան .

Երեւ . Տու . Աւալ . Ուղեղ .

'Ե յառաջանութեանն .

4 . սեքենայի . սենեքայի .

5 . 15 . պիտանացեացն . պիտանացուացն .

'Ե մարդնէ անդ .

5 . 18 . մնայն . միայն .

50 . 4 . հինգերբորդ . հինգերբորդ . այսուհետեւ առաջնորդայն , առաջնորդայն . առաջնորդայն .

70 . 7 մանյով . յօթինուն ինչ . մայնով .

10 բանյոց . յօթինուն ինչ . բայնոց .

72 . 14 . ասչափ . այսչափ .

88 . 13 . ասյալ . այսպէս .

95 . 19 . շեղտեմ . շեշտեմ .

125 . 9 . պլուտոնին . պլուտոնին .

160 . 25 . զօր օրինակ . զօր օրինակ .

194 . 23 . սեպուհոյ . սեպուհոյ .

237 . 24 . 'Ի ցուցականս . 'Ի ստացականս .

244 . 18 . գգումն . գգումն .

284 . 3 . 'Ի նման բանս . 'Ի նման բանս .

347 . 19 . յորովանէ . յորովայնէ .

334 . 22 . առ ոտս սեղանոյն . առ ոտից սեղանոյն .

352 . 13 . 'Ի նման դէպս . 'Ի նման դէպս .

371 . 24 . յարաքերեալ . յարաքերող .

382 . 28 . եղբ . եղինք .

388 . 20 . դիւրահաւատուի . դիւրահաւատուի .

- ՀՅԻ ։ ԱԵՐՀ  
ՀՅԻ ։ ԿՈՆ
93. 4 ՄԴԾԵ ։ ԱԳՐԱՐԾԵԱ
97. 25. ԱՐԲ. ։ ԱՐԲ-2
99. 1. ՀՅԱՆԿԱՆ. ՀՅԱՆԿԱՆ

ଶ୍ରୀମଦ୍ଭଗବତ  
ପ୍ରକାଶନ  
ପରିଚୟ



